Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
մարտի 22-ի նիստի N 11
արձանագրային որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ մինչև 2012 թվականի հունվարի 1-ը անձին երկու կենսաթոշակ նշանակված լինելու դեպքերի վերաբերյալ

Կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական համակարգ ներառված տվյալների ճշգրտման, կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ներդրման և իրականացված համադրումների հետևանքով հայտնաբերվել են դեպքեր, երբ անձը աշխատանքային կենսաթոշակ է ստացել սոցիալական ապահովության պետական ծառայությունից և զինվորական կենսաթոշակ՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից, ՀՀ ոստիկանությունից, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից կամ ՀՀ գլխավոր դատախազությունից՝ չունենալով երկու կենսաթոշակ ստանալու իրավունք:

Համապատասխան մասնագետներից կազմված խումբն աշխատանքային կարգով ուսումնասիրել է այդ անձանց կենսաթոշակի գործերը և հաշվարկվել է ավել վճարված կենսաթոշակի գումարը՝ շուրջ 76 մլն դրամ:

Միաժամանակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով դադարեցվել է 68 անձի աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքը, և միջոցներ են ձեռնարկվել ավել վճարված կենսաթոշակի գումարներն օրենքով սահմանված կարգով հետ գանձելու համար՝ պահումներ կատարելով նրանց վճարվող զինվորական կենսաթոշակներից:

Նախարարությունը քաղաքացիներից ստանում է բազմաթիվ գրավոր և բանավոր դիմումներ՝ նշելով, որ կենսաթոշակ նշանակելիս տեղեկացրել են այլ համակարգից կենսաթոշակ ստանալու մասին, կամ համարել են, որ նախկին օրենսդրությամբ նշանակված (վճարվող) գումարը ոչ թե կենսաթոշակ է, այլ որոշակի կարգավիճակ ունենալու համար տրվող նպատակային գումար և այլն:

Առկա են նաև դեպքեր, երբ կենսաթոշակ նշանակելու դիմումում բացակայում է այլ համակարգից կենսաթոշակ չստանալու մասին անձի կատարած նշումը:

Երկրորդ կենսաթոշակի նշանակման վաղեմությունը (կենսաթոշակների հիմնական մասը նշանակվել է 1990-ական թվականներին) հնարավորություն չի տալիս պարզել սխալի համար պատասխանատու անձանց (օրենսդրությամբ սահմանված չեն եղել կենսաթոշակ նշանակող տարբեր մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր, և բացակայել է բոլոր կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական բազան):